**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

<< 15 >> << օգոստոսի >> 2018թ. N 278

ք. Արմավիր

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ և 10-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թվականի սեպտեմբերի 19-ի N 1793-Ն որոշման 3-րդ կետի <<ա>> ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կանոնադրության 23 կետի <<բ>> ենթակետով՝*

***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

*1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը հատկացնել 80000 / ութսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ Արմավիրի մարզի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին Հանքավանի «Հասմիկ» ճամբարից երրորդ հերթափոխի ետ վերադարձը կազմակերպելու նպատակով:*

*2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստի պաշտոնակատար Վ .Վարդազարյանին՝ օրենքով սահմանված կարգով կատարել գումարի վճարում:*

*3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 15.08.2018 13:25:38 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403

*ՄԱՐԶՊԵՏ՝*
*Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ*

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am